

ՄՕՐ ՅԻՇԱՏԱԿԸ

Դ.

Օձը իւր թոյնը թափելու համար խորութիւն չի դնում մարդկանց մէջ, Նա իւր խայթոցն իջեցնում է անխտիր ամէնի մարմնի մէջ, ուլ հանդիպի: Ճիշտ այդպէս է և ատեցող ու չար կիւնը: Կնոջ ատելութիւնը ոչ խորութիւն և ոչ չափ ու սահման ունի: Նա կոյր է ու կատաղի և վայ նրան, ուլ չար կնոջ ատելութիւնն է շարժում իւր վրայ:

Մակարենց տունը երեք տարի էր որ ողողուել էր Նազլուի ատելութեամբ: Նա չէր խնայում և տան փոքրին, սիրուն Մանուէլին. ընդհակառակն ամենից առաւել ատելին Նազլուի համար Մանուէլն էր:

Մանուէլը ծնողների վերջնակն էր: Քառասուն տարուայ ամուսնութեան վերջին պտուղը: Հայրն ու մայրը ծերութեան շեմը կոխելով, իրենց ետևն էին թողել երիտասարդ օրերի պայծառ կեանքը, անմխիթար ներկայից և մահով պսակուող ապագայից նրանք իրենց հայեացքը վերցնելով կենդրոնացնում էին անցեալի վրայ, որ իբրև անուշ ցնորք անդառնալի կերպով թռել էր: Այդ անցեալից նրանց վերջին պարզեւր Մանուէլըն էր: Նա տան փոքրն էր, ուստի և ինչպէս ամենայն փոքր՝ սիրելի: Ամուսնացած զաւակները ծնողների խնամքին այլևս կարօտ չլինելով, որոշ չափով օտարանում են ծնողներից. իսկ Մանուէլը, որ դեռ ծնողների խնամքին շատ կարօտ էր, նրանց փայփայանքների մէջն էր տեսնում օր ու արև: Յայտնի բան է որ ծնողներն էլ անհամեմատ աւելի են սիրում այն զաւակին. որ իրենց գգուանքին կարօտ է: Բացի այդ, Մանուէլն իւր սիրուն խաժ աչքերով, իւր բաց, պայծառ ճակատով, իւր ձուլած և համաչափ դէմքով և իւր համեստ, հեզահամբոյր բնավորութեամբ շատ սիրելի էր և եղբայրներին ու աւագ հարսին: Ամէնքն էլ նրան սիրում էին. մօր «խօրօտիկ» զաւակն էր Մա-

նուէլը, հօր «անուշ բալէն», եղբայրների՝ «սիրելի հօտաղը», Սաւգուլի «աղիկ գառնարածը»:

Միայն Նազլուն էր, որ Մանուէլին տեսնելու աչք չուէր: Նրա ատկութիւնը աւելի բորբոքուած էր կարծես դէպի Մանուէլն հէնց այն պատճառով, որ բոլոր տանեցիք, իրեն աւտելի էին, և նոյն իսկ ամուսինը, այնքան սիրում էին նրան:

— Ցան ուտես, չմեծանաս, սատանի ձագ, ասում էր պատանուն Նազլու հարսը, երբ Մանուէլը կէսօրին տաւարը ջրի վրայ բերելիս կամ առաւօտեան գառներն արօտ տանելիս հաց էր ուզում Նազլուից մօր և մեծ հարսի բացակայութեան դէպքում, ու հացը շարտում նրա երեսովը:

Մանուէլը մանկութիւնից սիրոյ և բարութեան շնչով էր մեծացել: Նա իւր մանկական խաժ աչքերով շատ անգամ էր տեսել թէ ինչպէս մայրը՝ իւր փեշումը հաց կամ միրգ դնելով, ձեռքումը տաք կերակրի աման, աղքատ հարձանների տունն էր գնում նրանց քաղցը յագեցնելու: Շատ անգամ էր Մանուէլը մօր հետ թշուառութեանց վայրերը գնացել. շատ անգամ էլ ինքը՝ երեխան մօր յանձնարարութեամբ աղքատին հաց, պանդխտին կերակուր տարել, հիւանդի վիճակն իմանալու և մօրը տեղեկութիւն բերելու գնացել: Թշուառների շրջանը, որոնց օգնութեան ձեռք էր մեկնում բարի Շողեր տատը, պատանի Մանուէլին էլ սիրելի դարձաւ: Ամենայն թշուառութիւն Մանուէլի գոթը շարժում, նրա փափուկ մատաղ սրտի վրայ խոր տպաւորութիւն էր գործում: Դէպի մարդիկ արծարծուած այս սէրը տարածւում էր և կենդանիների վրայ ու ամրապնդում այդ քնքոյշ հոգին պատանու մէջ:

— Մանուէլ ջան, գառնուկս, տես, այն խեղճ մագին ինչպէս է ըռըռում. գառն է որոնում, որդի, շուտ գտի հասցրու մօրը, որ կաթ ծծի ու մայրը շատ չմղկտայ, ասում էր մայրը որդուն, երբ ոչխարը կթում էին սարում և երբ գառները մայրերի հօտին էին խառնուում կերակրուելու: Եւ Մանուէլը քրտնաթոր վազվաւտում գտնում էր գառը, մօրը հասցնում ու բարի գործ կատարած լինելու գիտակցութեամբ գալիս ու ժպտերես էր ու մօր մօտը նրա մի այլ յանձնարարութիւնը լսելու: Պատահում էր, որ հիւանդանում էր մագին կամ գառը, տիրում էր Մանուէլի սիրտը. մեռնում էր նրանցից մէկը, Մանուէլն արցունքները չէր կարողանում զսպել:

Որդու այդ գթոտ մատաղ սրտի վրայ ուրախանում էր մայրը ու առանց գիտակցելու թէ իւր հոգին է անդրադարձել Մանուէ-

լի մէջ և նրան հրեշտակական մի բնածին բարութեամբ օժտուած համարելով շատ անգամ էր գրկում, գգւում համբուրում նրան բացականչելով, «բարի յիշատակ լինես, գառնուկս, քո մօր բարի յիշատակ»:

— Մայրիկ ջան, ինչ կնշանակի «մօր բարի յիշատակ», մի անգամ հարցրեց Մանուէլը: Նա շարունակ լսում էր այդ բացականչութիւնը, շատ անգամ էր փորձել իւր մատղաշ խելքով ըմբռնել այդ բառերի իմաստը ու չէր կարողացել հասկանալ:

— Որդի, մօր բարի յիշատակը էն տղէն է, որ ոչ անասունի, ոչ մարդու վատութիւն չի անի, միշտ լաւութիւն կանի: Ձի հայհոյի, չի գողանայ, Աստուծուն կսիրի, ժամ կերթայ աղօթք կանի: Եդ տեսակ տղին ամէնքն էլ կօրհնեն, ու «որդումի» կտան մօրը թէ որ մեռած է: Մայրն այդ ժամանակ երկնքումը կուրախանայ, Աստուծու սուրբ երեսը կտեսնի ու փառք կտայ նրան, որ լաւ որդի է պարգևել իրեն աշխարհի վրայ: Իսկ եթէ որդին վատ լինի՝ ստախօս, գող, հայհոյող, աղօթքից փախչող, այն ժամանակ մարդիկն էլ նրան կանիծեն, մօրը կհայհոյեն և երկնքումը խեղճ մայրը գիշեր ցերեկ լաց կլինի, կղրկուի Աստուծու տեսութիւնից և մութ տեղ ընկած կտանջուի: Վատ տղէն մօր վատ յիշատակն է, լաւ տղէն՝ մօր բարի յիշատակը: Հասկացար որդի, վերջացրեց իւր բացատրութիւնը Շողեր տատը:

— Հասկացայ, մայրիկ, ասաց Մանուէլը, առաւել շուտ սրբաբոյ քան մտքով ըմբռնելով մօր ճառը: Եւ նա յանկարծ տխրեց, հարմրեց և հեռացաւ մօրից իւր արցունքը ծածկելու համար: Նա յիշեց որ նազլու հարսը շատ անգամ նրան «սատանի ձագ» է ասել «շան գաւակ»: Եւ ուրեմն իւր խեղճ մայրը երկինքը գնալուց յետոյ պիտի տանջուէր որդու պատճառով:

Բարեպաշտական ու բարոյական այս ոգին ամրացնում էին Մանուէլի մէջ և միւս հարազատները: Հայրը որ ծերութեան տարիներում երեցփոխանութեան պաշտօն էր վարում մի ժամանակ, ամենայն շաբաթ ու կիրակի Մանուէլին հետը եկեղեցի էր տանում: Տանից մինչև եկեղեցի հասնելը ծերունի Միքայէլը «տէր զի բազում եղեն նեղիք իմ» կամ «Ողորմես ինձ, Աստուած» սաղմոսն էր մրմնջում: Մանուէլը ոչինչ չէր հասկանում, բայց հօր լրջութիւնն այն ազդեցութիւնն էր գործում մանկան վրայ, որ վերջինս լուրջ կերպարանք էր ընդունում, գգալով որ հայրը մի սուրբ բան է անում, Աստուծոյ հետ է խօսում և լոկի ու յուշիկ քայլերով գնում էր նրա ե-

տևից: Տաճարին մօտենալիս ծերունին նախ համբուրում էր՝ դրսի պատը, ապա եկեղեցու դուռը և երկիւղածութեամբ ներս էր մտնում և կանգնում իւր տեղը: Փոքրիկ Մանուէլն առանց հօրից մի պատուէր լսելու, բարեպաշտական ամենայն արտայայտութեանց մէջ հետևում էր հօրը: Երբ դասոււմը կանգնած Մանուէլը հօրից օրինակ առնելով արագապէս ձկում էր իւր դալար ծնկները գետնի վրայ, մանրիկ թաթիկները գետնին դնելով համբուրում էր տաճարի հողէ յատակն ու ճակատը գետնին քսում, կանանց դասից դիտում էր այդ Շողեր տատն ու ջերմնաւորութիւնից յուզուող կրծքով բազկատարած աղօթում էր. «Սուրբ մարիամ Աստուածածին, դու իմ Մանուէլին արեւատութիւն տաս, բարի յիշատակ լինի»: Եկեղեցում աղօթող կանայք շատ անգամ իրենց որդիներին իբրև բարեպաշտութեան օրինակ էին բերում փոքրիկ Մանուէլին:

Գասպարն ու Մելքոն եղբայրները, Սաւուլ հարսը, աշխատասիրութեան այդ անտրտունը, երիտասարդները իրենց քնքոյշ սիրովն ու քաղցրութեամբ աշխատասիրութեան բուռն սէր էին արծարծում Մանուէլի մէջ: Տանը Սաւուլին հաճելի յանձնարարութիւն կատարելը թէ դաշտում Գասպար ու Մելքոն «աղբօր» օգնել մի որևէ բանում՝ Մանուէլին ամենամեծ բաւականութիւնն էին պատճառում:

Այսպէս էր մեծանում Մանուէլը, աւանդական անարատ ներշնչման բնական դաստիարակութեամբ և երջանիկ էին նրա հարազատներն ու երջանիկ էր փոքրիկ Մանուէլը:

Բայց այս ամենը փոխեց մի չար ոգու մուտքը Մակարենց տան շէմքից՝ Նազու հարսը:

Ինչպէս յիշեցինք վերևում Նազունն չէր խնայում Մանուէլին և ծնողների ներկայութեամբ, բայց առաւելապէս զաղտնի միշտ առիթ էր գտնում անիծելու, հայհոյելու փոքրիկ տեգորը: Սկզբներում Մանուէլն արտասուքն աչքերին վազում երեսը մօր փեշերի վրայ դնում և բողբոջում էր նրան: Մայրը սաստիկ վշտացած մերթ մերթ Նազունի անարգանքը տանել չկարողանալով, նկատողութիւն էր անում նրան և այդ ժամանակը Տէրը փրկէ, Աստուածն ազատէ. Նազունն բարձրացնում էր ձայնը, գոռում, հեղեղի պէս թափում նախատինքը Շողեր տատի վրայ: Վերջինս իւր «բռնուր իրեն քաշելով» լուռ և դուրս էր գնում: Ծերունի Միքայէլը այդ աղմուկներին պատահելիս տունն չէր մտնում, այլ սրահից յետ էր դառնում:

Նազունն հետզհետէ յառաջ գնալով սկսեց երբեմն էլ ապ-

տակներով դադել Մանուէլին: Այս անգամ միջամտող Գասպարն է լինում: Բայց և այնպէս առաջին լսողը դարձեալ Գասպարն էր լինում:

Այս կագ ու կռուի տեսարաններն իւր պատճառով սաստիկ ազդեցին Մանուէլի վրայ և նա այնուհետեւ իւր հարազատներին անհանգստութիւն չպատճառելու համար միշտ աշխատում էր թագցնել իւր կրածները Նազլուից:

Սակայն Մանուէլի վիճակը մի կերպ տանելի էր, քանի ղեռ կենդանի էր մայրը:

Մօր յան աշխարհի մի հարուած էր պատանի Մանուէլի համար, ինչպէս կացնի անողոք հարուածը դալար ծառի արմատին: Վշտի առաջին բռնկումներն, որոնք ուժաթափ էին անում մատղայ Մանուէլին, մօր թաղովից յետոյ անցան: Բայց նա իւր հասակին ոչ համեմատ շարունակեց մնալ տխուր: Տաւարը կամ գառները առաւօտեան սարը տանելիս ու երեկոյեան յետ բերելիս նա անցնում էր մօր գերեզմանի մօտով: Նա հանում էր երկիւղածութեամբ արախչին, մօտենում ընկնում գերեզմանի վրայ, լալիս ու համբուրում հողերը: Շատ անգամ տաւարը տուն էր գալիս առանց Մանուէլի և Գասպարը վազում էր որոնելու ու նրան գերեզմանատնից էր բերում:

Այս կեանքը երկար չտևեց և անցողական չեղաւ Մանուէլի համար:

Մի անգամ Մանուէլը սարից իջնելիս դարձեալ դէպի մօր գերեզմանը գնաց: Թորոսնց երեխաները, որ այդ օր նրա ետևից իրենց տաւարն էին բշտում, սկսան ծաղրել Մանուէլին ու վրդովել նրա մօր խաղաղ հանգիստը իրենց ցեղին յատուկ յիշոցներով: Չկարողացաւ տանել Մանուէլը ու խելագարուելու չափ վրդովուած մի քար վերցրաւ ու գցեց դէպի Թորոսնց երեխաներից մէկը: Քարը չը դիպաւ, բայց նրանց կատաղեցրեց: Նրանք երկուսով անողորմ կերպով թակեցին Մանուէլին: Բայց նրանց հայրոյանքը մօր յիշատակին առաւել ցաւ էր տալիս նրա մայրսէր սրտին քան հարուածները՝ մարմնին: Մանուէլը լալով տուն եկաւ: Իմացաւ Գասպարն ու արդարացի զայրոյթով ուղեց տանուտէրին բողբոջելու գնալ: Մերունի Միքայէլն արգելք եղաւ ասելով.

— Որդի, անզգամին ոչ գոյ Աստուած: Ի՞նչ օգուտ որ բողբոջես, ի՞նչ պիտի անի տանուտէրը: Թորոսնք աւելի պիտի կատաղեն և աւելի շատ հայրոյանք տան ու վրդովեն այստեղ մեզ, այնտեղ մեր խեղճ ննջեցելոց:

Բանը վերջացաւ Գասպարի և Նազլուի վիճաբանութեամբ, որ իւր եղբարց որդիներին պաշտպան հանդիսացաւ իսկ Մանուէլին փայփայանքով մխիթարեցին:

Վշտից ակորժակը կորցրած պատանին այդ օր առանց ընթրիք անելու, հոգով ու մարմնով տանջուած քուն մտաւ: Առաւօտեան երբ Սաւգուլը նրան օրուայ պաշար կապելով ու համբոյրներով ճանապարհ էր դնում դէպի սարը գնալու, Մանուէլը դարձաւ նրան տխուր ձայնով.

— Սաւգուլ ջան, վատ երազ եմ տեսել: Երազիս մէջ մայրիկս մեր ձորակի մի մութ այրից դուրս եկաւ ու դռանը կանգնեց, երբ ես տաւարը քշելով գալիս էի: Նա ցնցոտիներէ մէջ էր ու ցրտից դողում: Ես վազեցի նրա մօտ, նա յետ յետ քաշուեց մութ այրը: Ես վախեցայ ու զարթեցի: Եւ Մանուէլն սկսեց դառնապէս լալ:

— Մի լա, Մանուէլ ջան, երազները սուտ են, մի լա, աշխատում էր սփոփել նրան գրկելով Սաւգուլը, բայց ինքն էլ իւր արտասուքները պահել չկարողանալով սկսեց բարձրաձայն հեկեկալ:

— Զէ, Սաւգուլ, ես «բարի յիշատակ» չեմ. մօրս հայհոյում են և նա երկնքումը տանջում է իմ պատճառով. ու աւելի մղկտալով հեծկտաց Մանուէլը:

Լացի ձայնի վրայ դուրս եկաւ Նազլուն, նայեց այդ տեսարանին ու յայտնի չէ ինչ անցաւ մտքով, անցաւ նրանց մօտից ու խոփոռուելով վրաները ասաց լսելի ձայնով Սաւգուլին հասցէին. «հօխաբադ, եթիմին գրկել է լացէ լինում»...

Արցունքները թեթևացրին Մանուէլին և նա Սաւգուլին գրկիցը հլնելով շտապեց բակիցը դուրս գնացած տաւարին հասնել:

Այդ օր Մանուէլն իր տաւարը սարը չհանեց, այլ գիւղին մօտիկ դաշտերում արածեցնելով, կէսօրին գիւղը բերաւ ջրի վրայ: Զրելուց յետոյ անասուններին բակումը նստեցնելով Մանուէլը տուն մտաւ:

Սաւգուլը հաց էր թխում: Քրտնաթոր ճակատով նա մերթկոանում կպցնում էր «լօշերը» թոնրի կողին, մերթ եփածը հանելով բարձրացնում էր գլուխը: Նազլուն գունդ էր անում:

Մանուէլը նստաւ Սաւգուլի մօտ և սպասում էր, որ հարսը հաց թխելը վերջացնի և նրան կերակուր տայ: Սաւգուլը շարունակելով իւր գործը տրտում պատանու սիրտն ուրախացնելու համար զանազան բաներ սկսեց հարցնել համեմելով իւր խօսակցութիւնը փաղաքշական խօսքերով:

Այս խօսակցութիւնը, այս սիրաբանութիւնը դուր չեկաւ Նազլուին և նա մէջ մտնելով երեկուայ արկածը մէջ բերաւ ու անողորմ կերպով վիրաւորիչ խօսքեր ուղղեց Մանուէլին, անարգական ակնարկներ շոյլելով։ Նրա հանգուցեալ մօր հասցէին։ Մանուէլը ճիշդ արձակելով ձեռներով երեսին զարկեց ու լացի։ Զգացուեցաւ Սաւգուլը և սկսեց նախատինք տեղալ Նազլուի վրայ։

Երկու հարսը սոսկալի աղմուկի էին բռնուել։ Մանուէլը քաշուեցաւ «ծալքատեղի» սեան տակն ու սսկուեցաւ։ Հարսներն իրենց աղմուկով էին զբաղուած և չնկատեցին թէ ինչ է կատարոււմ։ Յանկարծ սեան ետեից հրացան որոտաց և պատանի Մանուէլը մէջքի վրայ գետին փռուեցաւ։ Սաւգուլը գլխին դարկելով վրայ ընկաւ մեռնող պատանուն։ Նա ձեռքերը դէպի Սաւգուլը տարածեց և հանգչող շնչով այսքանը միայն կարողացաւ ասել. «Սաւգուլ ջան... միաս բարով... մօրս... յիշատակը...»։

Պատանու մահը կայծակի արագութեամբ տարածուեց գիւղը։ Ծերունի Միքայէլը կալից եկաւ, Գասպարը մօտակայ արտից։ Մեկընը երկու օրով բացակայ էր գիւղից։

Եկան և գիւղացիք ու տիտուր տեսարանի վրայ հոգով ցաւեցին։

Պատանին վիշտը տանել չկարողանալով անկողնի ծալքից հանել էր Մեկընը եղբօր հրացանը, դրել էր փամփուշտը, ապա ոտքի վրայ հանելով շնիկը ոտքը չուանով կապել էր սնից և հրացանի բերանը դրել էր ուղիղ սրտի վրայ ու մի թեթեւ ձգողական շարժումով իջեցրել էր ոտքն ու արնլուիկ ընկել։

Տարօրինակ մահ էր Մանուէլի մահն ու չտեսնուած։ Գիւղը սարսափեց այդ մահից։ Եկաւ և տանուտէրը ու յայտնեց իբրև օրէնքի ներկայացուցիչ թէ պէտք է իշխանութեան իմաց տալ որ բժիշկ բերեն ինքնասպան պատանու մարմինը «կըտրտելու»։ Գիւղացոց աչքում դիակն անդամահատելը ծանր անարգանք է ննջեցեալի հասցէին. ուստի և աղերսեցին որ տանուտէրն իմաց չտայ ինքնասպանութեան մասին և թաղեն պատանուն իբրև բնական մահով մեռածի։ Տանուտէրը իւր պատասխանատուութիւնը մէջ բերելով պնդում էր որ անդամահատուի։ Ամբողջ տունը լցուած էր մարդկանց և կանանց բազմութեամբ երբ «էրէցն» եկաւ։ Բարի քահանան այդ անօրինակ մահից դալկացել էր վշտից։ Նրան պատմել էին ճանապարհին ինքնասպանութեան պատճառը։ Տուն մտնելիս նրա օգնութիւնը խնդրեցին տանուտիրոջն համոզելու համար։ Բարի քահա-

նան բարձր ձայնով դարձաւ ամենքին: Լոեցին սգի ձայները:

— Եզրայրներ, իմ իշխանութեան օրէնքով անձնասպանին քահանան պիտի չթաղէ: Սակայն այս պատանին ինքնասպան չէ, այլ սուրբ նահատակ: Դօր յիշատակի նահատակ: Ես իմ իշխանութեան առջևը պատասխանատուութիւնն յանձն առնելով՝ վաղը սուրբ պատարագով պիտի թաղեմ այս մանուկնահատակին և խնդրում եմ որ տանուտէրն էլ չյայտնէ իւր իշխանութեանը. վասն զի նահատակների մարմինն դանակ զարկելը մեղք եմ համարում:

Քահանայի օրինակն ազդեցիկ էր ամենքի և տանուտէրի համար: Թաղեցին Մանուէլին: Ամբողջ Դ. գիւղը սուգ արաւ առաքինի պատանու վրայ:

Այս դէպքից տասն տարի յետոյ ես գիւղը հանդիպեցայ: Զատիկի Մեռելոցի օրը գերեզմանոց գնացի պապիս ու տատիս գերեզմաններն օրհնել տալու: Ծերունի Միքայէլին հեռուից տեսայ. նա աւելի ևս ցամաքել էր: Նա կանգնած էր քովէքով շարուած երեք գերեզմանի գլխավերևում կուրծքը յենած ձեռնափայտի վրայ, որ բռնած էր երկու ձեռքով: Գերեզմանների վրայ ընկած աղեկտուր լալիս էին Սաւգուլը, իւր երկու որդիք և Մելքոնը, որ անժամանակ ծերացել էր. նրա մագերը բոլորովին ճերմկել էին: Այդ երեք գերեզմաններից միջինը՝ Մանուէլին էր, աջ կողմինը Շողեր տատին, իսկ ձախ կողմինը՝ Գասպարին: Մանուէլի մահից երկու տարի յետոյ էլ Գասպարն էր մեռել: Ծերունին շատ անգամ էր առաջարկել Սաւգուլին բաւական համարել իւր վիշտն ու քաշած օրերը և խնդրել էր որ կրկին ամուսնանայ ու ազատուի իւր տնից: Սակայն առաքինի Սաւգուլն իրեն ձեռքը խնդրողներին բոլորին էլ մերժել էր ուխտելով այրի մնալ ու խնամել ծերունուն ու իւր երկու որդոցը:

Կարդացի Մանուէլի տապանագիրը, որ գիւղի սիրելի «էրէցն» էր կազմել ու փորագրել տուել, որը նոյնպէս վախճանուած էր: Այսպէս էր տապանագիրը. «Աստ հանգչի սրբափայլ մարմին պատանի Մանուէլին, որդւոյ Միքայէլին, որ նահատակեցաւ յերեսաց անզգամին, վասն յիշատակի մօրն իւրոյ»:

Ես էլ համբուրեցի մօր յիշատակին երկրպագու Մանուէլի տապանաքարը և ծերունի Միքայէլի թևը մտնելով ու մխիթարելով գերեզմանատնից գիւղը բերի: